

ՀՀ Արտաքին գործերի նախարարության

2020-2022

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2020

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ (2017-2019) ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը, հիմնվելով ՀՀ Նախագահի և Վարչապետի ուրվագծած արտաքին քաղաքականության ուղենիշների և նրանց կողմից տրված հանձնարարականների, ինչպես նաև ՀՀ կառավարության ծրագրերի վրա, 2017-2019թթ. ընթացքում շարունակել է աշխատանքներն՝ ուղղված Հայաստանի արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը, զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը, բարեկամների թվի ավելացմանը, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածության ընդլայնմանը, միջազգային ասպարեզում երկրի հեղինակության և դիրքերի ամրապնդմանը, արտերկրում Հայաստանի և նրա քաղաքացիների շահերի պաշտպանությանը, հայկական մշակութային ժառանգության պահպանմանը, միջազգային հարաբերություններում դրական օրակարգ ձևավորող և ՀՀ շահերին համահունչ նախաձեռնությունների իրականացմանը:

- Արցախյան հակամարտության կարգավորման ուղղությամբ Հայաստանը շարունակել է ջանքերը հիմնահարցի բացառապես խաղաղ, միջազգային իրավունքի սկզբունքների ու նորմերի հիման վրա հանգուցալուծման ուղղությամբ՝ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ իրականացվող բանակցությունների շրջանակում:

2018թ. ապրիլին տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո Հայաստանի իշխանությունները վերահաստատել են հանձնառությունը շարունակել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահության ձևաչափում դարաբաղյան խնդրի բացառապես խաղաղ կարգավորման ուղղությամբ գործընթացը: Ընդգծվել է, որ Արցախը որպես հակամարտության հիմնական կողմ պետք է որոշիչ ձայն և ներգրավվածություն ունենա իրական և տևական խաղաղությանը միտված հանգուցալուծման գործընթացում: 2018-2019 թվականներին կայացել է երկու հանդիպում ՀՀ վարչապետի և Ադրբեյջանի նախագահի միջև, ինչպես նաև չորս հանդիպում Հայաստանի և Ադրբեյջանի ԱԳ նախարարների միջև:

2017թ. նոյեմբերին ստորագրված ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդգրկուն գործընկերության համաձայնագրում ամրագրվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին և, որպես խնդրի կարգավորման հիմք՝ նրանց կողմից առաջարկված միջազգային իրավունքի երեք սկզբունքներին աջակցության մասին դրույթը:

- Շարունակվել են աշխատանքները Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ:

- 2018թ. մարտի 1-ին ՀՀ Նախագահի հրամանագրով դադարեցվել է հայ-թուրքական արձանագրությունների վավերացման ընթացակարգը և փաստաթղթերից հետ է կանչվել հայկական կողմի ստորագրությունը:

- Հայաստանը շարունակել է ամրապնդել և խորացնել ռազմավարական դաշնակցային հարաբերությունները Ռուսաստանի Դաշնության հետ, ինչին նպաստել

են երկու երկրների բարձրագույն ղեկավարության միջև հանդիպումները: Մասնավորապես ակտիվ փոխգործակցություն է ծավալվել ռազմական, տնտեսական, հումանիտար, միջխորհրդարանական կապերի և ապակենտրոնացված համագործակցության զարգացման ուղղությամբ:

- Զարգացում է ապրել Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ Հայաստանի բարեկամական գործընկերությունը, ինչին նաև նպաստել են երկկողմ այցելություններն ու քաղաքական երկխոսությունը, տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի արդյունավետ գործունեությունը, առևտրի և ներդրումների շրջանակային համաձայնագրի հիման վրա ստեղծված Առևտրի և ներդրումների խորհրդի գործունեությունը:

- Շարունակվել են եվրոպական երկրների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի, Իտալիայի և այլ երկրների հետ երկկողմ գործընկերային կապերի զարգացման ուղղությամբ աշխատանքները:

- Շարունակվել է ակտիվ համագործակցությունը Հայաստանի և Եվրոպական Միության միջև: Երկուստեք վերահաստատվել է փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում Հայաստան-ԵՄ համապարփակ համագործակցությունը զարգացնելու և ամրապնդելու հանձնառությունը:

2017թ. նոյեմբերի 24-ին ստորագրվել է ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ): Առ այսօր համաձայնագիրը վավերացրել է 11 ԵՄ երկիր:

- Ակտիվ աշխատանքներ են իրականացվել հարևան պետությունների՝ Վրաստանի և Իրանի հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններն ամրապնդելու և խորացնելու ուղղությամբ:

- Շարունակվել են ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի՝ հատկապես Չինաստանի, Հնդկաստանի, Ճապոնիայի, ինչպես և ամերիկյան մայցամաքի արագ զարգացող պետությունների՝ Բրազիլիայի, Արգենտինայի (և այլ) հետ համագործակցության խորացման ուղղությամբ աշխատանքները: Կայացել են ՀՀ նախագահի և վարչապետի այցերը ՉԺՀ:

- Հետևողական քայլեր են ձեռնարկվել դիվանագիտական կապերի աշխարհագրության ընդլայնման ուղղությամբ, հատկապես ասիական և աֆրիկյան ուղղություններով:

- Ուշադրության կենտրոնում են եղել զարգացումներն արաբական աշխարհում: Օրակարգում շարունակել են առանցքային տեղ զբաղեցնել սիրիահայության անվտանգության, Սիրիայի հայկական պատմամշակութային ժառանգության պահպանման հարցերը: 2017-2018թթ. ժամանակահատվածում 174 տոննա մարդասիրական օգնություն է առաքվել Սիրիա: Նախաձեռնվել են համապատասխան իրավական քայլեր Սիրիայում և Իրաքում բնակվող մեր հայրենակիցների համար ՀՀ

քաղաքացիության, ինչպես նաև մուտքի արտոնագրի տրամադրման ընթացակարգերի
ոլորացման ուղղությամբ:

- Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության շրջանակներում Հայաստանը շարունակել է հանդես գալ կառույցի առավել ամրապնդմանն ուղղված նախաձեռնություններով: Մասնավորապես քայլեր է ձեռնարկել կազմակերպության արդյունավետության բարձրացման, ՀԱՊԿ պետությունների կողմից միմյանց հանդեպ դաշնակցային պարտավորությունների կատարումը ապահովելու, կազմակերպության նորմատիվ իրավական հենքի բացը լրացնելու ուղղությամբ:

- Հայաստանն ակտիվորեն ներգրավված է եղել ԵԱՏՄ շրջանակներում տեղի ունեցող ինտեգրացիոն գործընթացներին: Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահության շրջանակում 2017թ. հոկտեմբերին Երևանում կայացել են ԵԱՏՄ անդամ-պետությունների կառավարությունների ղեկավարների նիստը և Եվրասիական գործընկերության երկրորդ միջազգային համաժողովը: 2018թ. դեկտեմբերի 6-ին Սանկտ Պետերբուրգում տեղի ունեցած Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստի շրջանակներում Հայաստանը ստանձնել է ԵԱՏՄ մարմիններում 2019թ. նախագահությունը:

- Հայաստանը շարունակել է ակտիվ ներգրավվածությունը ԱՊՀ շրջանակներում իրականացվող փոխգործակցությանը, ԱՊՀ մասնակից պետությունների հետ ձևավորված ավանդական կապերի խորացմանը:

- Հայաստանը շարունակել է խորացնել իր ներգրավվածությունը ՄԱԿ-ի շրջանակներում:

Շարունակվել են աշխատանքները մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ: 2018թ. դեկտեմբերի 9-11-ը ՀՀ ԱԳ նախարարությունը ՄԱԿ-ի Ցեղասպանությունների կանխարգելման և պաշտպանելու պատասխանատվության հարցերով գրասենյակի աջակցությամբ, Ցեղասպանագետների միջազգային ասոցացիայի հետ համագործակցությամբ Երևանում նախաձեռնել է «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» երրորդ զլոբալ ֆորումի անցկացումը:

- Հայաստանը շարունակել է ակտիվ մասնակցությունը ԵԱՀԿ գործունեության բոլոր երեք հարթություններում (ռազմաքաղաքական, տնտեսական-բնապահպանական եւ մարդու իրավունքների):

- ՀՀ ակտիվ մասնակցել է Եվրոպայի Խորհրդում ընթացող աշխատանքներին:

- Տարբեր ծրագրերի շրջանակներում շարունակվել է փոխգործակցությունը Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպության (ՆԱՏՕ) հետ:

- 2018թ. Երևանում կայացել է ՖՄԿ 17-րդ գագաթաժողովը, որն աչքի է ընկել մասնակցության բարձր մակարդակով և մասնակիցների լայն ընդգրկմամբ: Գագաթաժողովի ավարտին ընդունվել է Երևանի Հռչակագիրը:

- Արտաքին քաղաքական օրակարգում կարևոր տեղ է զբաղեցրել տնտեսական բաղադրիչը: Ջանքեր են գործադրվել միջազգային տնտեսական կառույցների և ֆինանսական հաստատությունների հետ կապերի զարգացման, տարբեր պետությունների հետ առևտրատնտեսական համագործակցության խորացման, հայկական արտադրանքի արտահանման համար նոր շուկաների բացահայտման, օտարերկրյա ներդրումների խրախուսման, Հայաստանի տնտեսական և զբոսաշրջային հնարավորությունների ներկայացման ուղղությամբ: Նախաձեռնվել և անցկացվել են տարբեր պետությունների հետ տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովների նիստեր, գործարար համաժողովներ, հայկական արտադրանքի ցուցադրություններ:

- ՀՀ ԱԳ նախարարությունը աջակցություն է ցուցաբերել տարբեր պետությունների հետ ՀՀ միջխորհրդարանական կապերի զարգացման, բազմակողմ խորհրդարանական ձևաչափերում Հայաստանի պատվիրակությունների մասնակցության, ապակենտրոնացված համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքներին:

- Շարունակվել է միջազգային համագործակցությունը մշակութային, գիտական և կրթական ոլորտներում: ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններն աշխատանքներ են ծավալել արտերկրում հայ մշակույթի հանրահռչակման ուղղությամբ:

- ԱԳՆ պետական արարողակարգի ծառայության կողմից ապահովվել է ինչպես ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների օտարերկրյա այցերի, այնպես էլ օտարերկրյա բարձրաստիճան պատվիրակությունների ՀՀ կատարած այցերի կազմակերպումը:

- ՀՀ արտաքին աշխարհի համար շարունակել է մնալ որպես վստահելի և կանխատեսելի գործընկեր, հեղինակավոր միջազգային լրատվամիջոցներում լույս են տեսել բազմաթիվ դրական հրապարակումներ Հայաստանի վերաբերյալ: Հանրապետության նախագահը, վարչապետը և ԱԳ նախարարը մի քանի տասնյակ ելույթներ են ունեցել աշխարհի հեղինակավոր քաղաքագիտական կենտրոններում, հարցազրույցներ ու մամուլի ասուլիսներ են կազմակերպվել առաջատար լրատվամիջոցների հետ:

ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական դպրոց

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը 2017-19թթ. իրականացրել է հետևյալ ամենամյա ծրագրերը. 1. «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» տասնմեկամյա ծրագիրը (տարեկան շրջանավարտների թիվը՝ 25-32), 2. «Հյուպատոսական գործունեություն» մեկամյա ծրագիրը (տարեկան մասնակիցների թիվը՝ 9-16), 3. «Դիվանագետների և պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատակիցների վերապատրաստման» երկամյա ծրագիրը (տարեկան 20-24 մասնակից) և 4. լրագրողների վերապատրաստման դասընթացը (8-12 մասնակից):

Մինչև 2018թ. ներառյալ Եվրոպական Միությունը ֆինանսավորել է Դիվանագիտական դպրոցի՝ արտերկրից հրավիրվող դասախոսների, ինչպես նաև այլ ծախսերը:

2018թ. դադարած ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծախսերի մի մասը ստանձնել է ՀՀ կառավարությունը: Հատկացված գումարով Դպրոցը հոգում է միայն մեկ՝ Վերապատրաստման ծրագրում ներգրաված, արտերկրից հրավիրվող 5 դասախոսների ծախսերը: Տարեկան նախկին մեկ անգամի փոխարեն, 2019թ-ից այդ ծրագիրը կիրականացվի տարեկան երկու անգամ:

2. ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից բխող հնգամյա միջոցառումների ցանկի՝ ՀՀ ԱԳՆ գործունեության նպատակներն ու թիրախներն են.

- Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորում՝ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների, մասնավորապես՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքի հիման վրա:

- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում և դատապարտում:

- Երկկողմ հարաբերություններ.

- Ռուսաստանի Դաշնության հետ ամենատարբեր բնագավառներում ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների զարգացում,

- ԱՄՆ-ի հետ տարբեր ոլորտներում բարեկամական գործընկերության հետևողական ամրապնդում և խորացում,

- Եվրոպական երկրների հետ բարեկամական և գործընկերական հարաբերությունների խորացում և ընդլայնում: ԵՄ-ի հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկում,

- Իրանի և Վրաստանի հետ առանձնահատուկ բարիդրացիական հարաբերությունների զարգացում, որոնք հնարավորինս զերծ կլինեն աշխարհաքաղաքական այլ ազդեցություններից,

- Չինաստանի հետ բարեկամական հարաբերություններին բնորոշ բազմաոլորտ լայն համագործակցության ծավալում և ընդլայնում,

- Հնդկաստանի և Ճապոնիայի հետ բարեկամական և փոխշահավետ փոխգործակցության զարգացում և խորացում,

- Փոխգործակցության ընդլայնում Մերձավոր Արևելքի գործընկեր երկրների հետ,

- Համագործակցության զարգացում Ամերիկայի, Ասիայի, Աֆրիկայի եւ Օվկիանիայի պետությունների հետ:

- Բազմակողմ հարաբերություններ.

- Եվրասիական տնտեսական միությանը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը Հայաստանի անդամակցության արդյունավետության բարձրացում,

- ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵԽ-ում և միջազգային այլ կառույցներում Հայաստանի առավել ակտիվ ներգրավվածություն,
- ԱՊՀ շրջանակներում համագործակցությանն ակտիվ մասնակցություն: ԱՊՀ երկրների հետ երկկողմ հարաբերությունների զարգացում,
- ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակում, անհատական գործընկերության ծրագրի հետևողական իրագործում,
- Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությանը Հայաստանի ներգրավվածության խորացում, ՖՄԿ –ում Հայաստանի նախագահության բարձր մակարդակով իրականացում:

• Ակտիվ մասնակցություն միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման ուղղությամբ:

• Ակտիվ դերակատարություն ցեղասպանության և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ միջազգային հանրության ջանքերում:

• Աջակցություն Հայաստանի տնտեսական զարգացմանը.

- աշխատանքներ օտարերկրյա ուղղակի ներդրումների աճի, միջազգային լավագույն օրինակների և փորձառության փոխառման, հայրենական արտադրողի համար նոր շուկաների բացահայտման և արտահանման համար նպաստավոր պայմանների ձևավորման, դեպի Հայաստան զբոսաշրջության խթանման ուղղությամբ,

- միջկառավարական հանձնաժողովների աշխատանքներում տնտեսական քաղաքական արդունավետության բարձրացում,

- Սփյուռքի գործարար ներուժի լիարժեք ներգրավում,

- միջազգային տնտեսական ինտեգրացիոն կառույցների շրջանակներում ՀՀ տնտեսական շահերի առաջնություն:

• Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու շահերի պաշտպանություն: Աջակցություն արտակարգ իրավիճակներում հայտնված հայրենակիցներին:

• Հայ ժողովրդի քաղաքակրթական արժեքների և ժառանգության պաշտպանություն և հանրահռչակում: Մշակութային և գիտակրթական կապերի խորացում:

• Հայաստանում և միջազգային ասպարեզում ժողովրդավարական հաստատությունների ամրապնդում:

ՀՀ ԱԳՆ Դիվանագիտական դպրոց

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի նպատակները սահմանված են ՀՀ կառավարության 2009թ. սեպտեմբերի 23-ի N 1111 որոշմամբ և Դպրոցի կանոնադրությամբ.

1) դիվանագետների, պետական մարմինների արտաքին կապերի համար պատասխանատու ստորաբաժանումների աշխատողների վերապատրաստումը,

2) դիվանագիտական կադրերի պատրաստումը՝ բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին հատուկ մասնագիտական գիտելիք տրամադրելու միջոցով,

3) միջազգային հարաբերությունների ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությանը մասնակցությունը, 4) այլ ուսումնական ծրագրերի իրականացումը:

Այս նպատակներից ելնելով, Դիվանագիտական դպրոցի գործունեության թիրախներ են մնում.

- ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի՝ որպես որակյալ կրթական և վերապատրաստման ծրագրեր իրականացնող հաստատության կարողությունների ամրապնդումը,
- Դիվանագետների վերապատրաստման ծրագրերի հետագա կատարելագործումը և շարունակական իրագործումը,
- Արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում գիտահետազոտական աշխատանքների ձեռնարկումը,
- Դիվանագիտական դպրոցի՝ որպես արտաքին քաղաքականության և դիվանագիտության ոլորտում քննարկումների հարթակի կայացումը,
- Դիվանագիտական դպրոցի՝ որպես աշխարհում տեղի ունեցող գլոբալ և տարածաշրջանային նշանակության իրադարձությունների վերլուծության և արդի մարտահրավերների վերաբերյալ դիրքորոշումների քննարկման և ձևավորման հարթակի կայացումը,
- Դիվանագիտական դպրոցի և լեզվի ուսուցման արտերկրի հեղինակավոր կենտրոնների համատեղ ջանքերով մշակված «Անգլերեն դիվանագետների համար» դասընթացի հետագա դասավանդումը և նոր ունկնդիրների ներգրավումը,
- Վերապատրաստման նոր դասընթացների ներդրումը,
- Վերապատրաստման, թեստավորման և քննական նոր մեթոդների և մեխանիզմների ներդրումը:

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ
Պեդական մարմնի գերատեսչական դասիչը՝ 104005

Պեդական մարմնի անվանումը՝ ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ՄԱՍ 3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները				Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ	
		Չափորոշիչը	Ելակետը		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը		Ժամկետը
Դիվանագիտական և պետական ծառայության արդյունավետության բարձրացում	1050 Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում	Դիվանագիտական ծառայության համալրում նոր և որակյալ մասնագետներով, պետական ծառայության, այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների վերապատրաստում , մասնակիցների քանակ, մարդ	66	2018 թ.	65	2020 թ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019թ. 4.4 Կրթությունը և գիտությունը «Առանցքային են կրթության բովանդակության արդիականացումը՝ ուղղված կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդմանը:»
ՀՀ ինքնիշխանության պաշտպանություն, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովում, ՀՀ միջազգային հեղինակության բարձրացում, ՀՀ կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցություն	1061 Արտաքին գործերի ոլորտում Կառավարության քաղաքականության մշակում և իրականացում	ՀՀ միջազգային երկկողմ հարաբերություններ ի ընդլայնում. ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների քանակ, հատ	176	2018 թ.	178	2020 թ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019թ. 2.3 Արտաքին քաղաքականությունը «Կառավարության արտաքին քաղաքականությունը նպատակաուղղված է ՀՀ ինքնիշխանության պաշտպանությանը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանը, բոլոր պետությունների հետ փոխաշահավետ և իրավահավասար հարաբերությունների զարգացմանը, միջազգային և տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացմանը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում համագործակցության խորացմանը, Հայաստանի կայուն զարգացմանը և
		ՀՀ միջազգային բազմակողմ հարաբերություններ ի ընդլայնում. միջազգային կազմակերպությունների քանակ, որոնց ՀՀ-ը անդամակցում է կամ այլ կարգավիճակով ^a փոխգործակցում, հատ	97	2018 թ.	114	2020 թ.	

							տնտեսության արդիականացմանը, նոր շուկաներ մուտքի ապահովմանը և դեպի Հայաստան ու Արցախ օտարերկրյա ներդրումների ավելացմանը:»
	1118 Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ	Անդամակցվող միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի և կոնվենցիաների թվաքանակ, հատ	84	2018 թ.	101	2020 թ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019թ. 2.3 Արտաքին քաղաքականությունը «Կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցություն»
	1128 Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում	Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ (բացառությամբ մասնագիտացված միջազգային կազմակերպություններում ՀՀ ներկայացուցիչների և ներկայացուցչությունների), հատ	58	2018 թ.	63	2020 թ.	ՀՀ կառավարության ծրագիր 2019թ. 2.3 Արտաքին քաղաքականությունը «Բոլոր պետությունների հետ փոխշահավետ և իրավահավասար հարաբերությունների շարունակական զարգացում»
Հայաստանի Հանրապետության բարձր մակարդակի ներկայացուցչականության ապահովում	1178 Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում	Արարողակարգային միջոցառումների կազմակերպման և իրականացման որակի ԱԳՆ գնահատական, 1-ից 10 բալային համակարգում	10	2018 թ.	10	2020 թ.	

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ Արտաքին գործերի ոլորտի ընդհանուր նկարագիրը

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ՀՀ Կառավարության ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը, ինչպես նաև կազմակերպում և ղեկավարում է դիվանագիտական ծառայությունը օտարերկրյա պետություններում և միջազգային կառույցներում:

Արտաքին գործերի նախարարության գործունեությունը նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության պաշտպանությանը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովմանը, Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակության բարձրացմանը, բոլոր պետությունների հետ

փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը, միջազգային ու տարածաշրջանային գործընթացներին Հայաստանի ներգրավվածության ավելացմանը, երկկողմ և բազմակողմ ձևաչափերում Հայաստանի կայուն զարգացմանը և տնտեսության արդիականացմանը, նոր շուկաների ձեռքբերմանը, դեպի Հայաստան և Արցախ ներդրումային ծրագրերի նախաձեռնմանը:

Հայաստանի Հանրապետությունը դիվանագիտական հարաբերություններ է հաստատել աշխարհի 176 երկրների հետ, անդամակցում է 101 միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ մասնագիտացված մարմինների, ծրագրերի, կոնվենցիաների և համաշխարհային հանրության կողմից ընկալվում է որպես կանխատեսելի ու հուսալի գործընկեր, որը գործով ապացուցել է իր վստահելիությունը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային, այդ թվում՝ երկկողմ ու բազմակողմ մակարդակներում: Արտերկրում ՀՀ-ն ունի 41 ռեզիդենտ դեսպան, ովքեր հավատարմագրված են ընդհանուր առմամբ 73 երկրում: ՀՀ մշտական ներկայացուցիչներ են նշանակված 11 միջազգային կազմակերպություններում, արտերկրում գործում են ՀՀ 9 գլխավոր հյուպատոսություն և 40 պատվավոր հյուպատոս: Արդյունքում ավելի է ամրապնդվել ՀՀ միջազգային հեղինակությունն ու վարկանիշը, ինչպես և ՀՀ գործողությունների ու դիրքորոշումների ընկալումն ու աջակցությունը միջազգային հանրության կողմից:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորումներ
Ընդդեմ ցեղասպանության հանցագործության չորրորդ և հինգերորդ Գլոբալ ֆորում	ՀՀ կառավարության ծրագիր, 2019թ.
ՀՀ դեսպանության բացում Իսրայելում	ՀՀ ԱԳՆ 2019-2023թթ. միջոցառումներ
ՀՀ դեսպանության բացում Կատարի Պետությունում	ՀՀ կառավարության որոշում 06.02.2019 թ. թիվ 78-Ն
ՀՀ դեսպանության բացում Եթովպիայում	ՀՀ ԱԳՆ 2019-2023 միջոցառումներ
ՀՀ դեսպանության բացում Ուզբեկստանում (նստավայրը՝ Երևան)	ՀՀ Նախագահի 20.06.2019թ. թիվ ՆՀ-132-Ա հրամանագիր
ՀՀ գլխավոր հյուպատոսության բացում Էրբիլում	ՀՀ Նախագահի 13.03.2017թ. թիվ ՆՀ-288-Ա հրամանագիր
Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպությունում Հայաստանի նախագահության շրջանակներում միջոցառումների իրականացում	Համաձայն ՖՄԿ 17-րդ գազաթափողովի ընդունած հռչակագրի Հայաստանի կողմից ընդունված հանձնառությունների

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1 Պարզադիր և հայեցողական ծախսերը

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր հայեցողական պարտավորությունների շրջանակը	կամ Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	կամ Պարտադիր հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
1050	11001	Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում	Դիվանագետների պատրաստում Պետական ծառայողների վերապատրաստում	Վերապատրաստվողների քանակը Դիվանագիտական դպրոցի պահպանման ծախսեր	«Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 1-2-րդ կետեր, ՀՀ կառավարության N1111-Ն 23.09.2009թ. որոշում
1061	11001	Կառավարության արտաքին քաղաքականության մշակում և իրագործման ապահովում	Միջազգային հարաբերություններում ՀՀ շահերի և իրավունքների ներկայացում: Օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն: ՀՀ միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացում: Համաշխարհային քաղաքական և տնտեսական իրադրության, օտարերկրյա պետությունների արտաքին ու ներքին քաղաքականության, միջազգային կազմակերպությունների գործունեության վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացում: Համաշխարհային և տարածաշրջանային հիմնա-	Երկկողմ և բազմակողմ կապերի շրջանակը, ծավալն ու խորությունը:	ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին օրենքի հավելվածի 5-րդ կետ

			խնդիրների լուծման գործում ՀՀ դերի բարձրացում: Պետական մարմիններին իրենց գործունեության համար արտաքին քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ ապահովում		
1118	12001	Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ	Սահմանված ժամկետներում անդամավճարների մուծում	Ըստ արտաքին քաղաքականության առաջնությունների՝ միջազգային կազմակերպությունների շրջանակի ընտրությունը:	ՀՀ ԱԳՆ կանոնադրության 11-րդ կետի 4-րդ ենթակետ
1128	11001	Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացում	Միջազգային հարաբերություններում ՀՀ շահերի և իրավունքների ներկայացում: Օտարերկրյա պետություններում ՀՀ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանություն: ՀՀ միջազգային իրավապայմանագրային հարաբերությունների, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ դիվանագիտական կամ հյուպատոսական հարաբերությունների իրականացում:	Դեսպանությունների քանակը օտարերկրյա պետություններում: Դեսպանությունների պահպանման ծախսերի ծավալը:	ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին օրենքի հավելվածի 5-րդ կետ Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 51-րդ հոդվածներ
1061	11002	ՀՀ մուտքի արտոնագրերի, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքների իրականացում	Հյուպատոսական գործունեության իրականացում և այդ նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով նախարարությանը վերապահված գործառույթների կատարում	Ձևաթղթերի միավորի տպագրական ծախսերի ծավալը:	ՀՀ ԱԳՆ կանոնադրության 11-րդ կետի 15-րդ ենթակետ
1118	12002	ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկա-	Հայաստան-ՆԱՏՕ հարաբերությունների	Տարածքի ընտրություն,	ՀՀ ԱԳՆ կանոնադրության

		տվական կենտրոնի գործունեության ապահովում	վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակի բարձրացում	վարձակալության ծախսեր:	11-րդ կետի 14-րդ ենթակետ Հայաստան-ՆԱՏՕ ԱԳԳԾ 2017-2019թթ. ծրագիր
1128	12001	ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում	ՆԱՏՕ-ի հետ քաղաքական երկխոսության շարունակում, անհատական գործընկերության ծրագրի հետևողական իրագործում	Գրասենյակի ընտրություն: Աշխատակազմի թվաքանակ:	ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին օրենքի հավելվածի 5-րդ կետ
1128	31001	Արտերկրում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների շենքային պայմանների ապահովում	Հայաստանի Հանրապետության պատշաճ ներկայացում օտարերկրյա պետություններում, միջազգային կազմակերպություններում և ինտեգրացիոն գործընթացներում	Բելգիայում սեփականության իրավունքով շենքի ձեռքբերում:	ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին օրենքի հավելվածի 5-րդ կետ
1178	11001	Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում	Միասնական արարողակարգային գործելակերպի և ընթացակարգի ապահովում, արարողակարգային կանոնների միասնական կիրառում Հայաստանի Հանրապետությունում և Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերություններում:	Արարողակարգային միջոցառումների քանակը, ծախսերի ծավալը:	ՀՀ կառավարության կառուցվածքի և գործունեության մասին օրենքի հավելվածի 5-րդ կետ ՀՀ ԱԳՆ կանոնադրության 11-րդ կետի 17-րդ ենթակետ

Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, ՀՀ ԱԳՆ համակարգում մշակվում է կադրային, ֆինանսական և վարչական բարեփոխումների փաթեթ: Բարեփոխումների հետ կապված ֆինանսական հաշվարկները կներկայացվեն լրացուցիչ:

4.2 Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

ԾՐԱԳԻՐ 1061 - Արտաքին գործերի ոլորտում կառավարության քաղաքականության մշակում և իրականացում

Արտաքին գործերի նախարարությունը, համաձայն ԱԳՆ Կանոնադրության (11 հունիսի 2018 թվականի N 746 – Լ) արտաքին գործերի բնագավառում մշակում է ՀՀ կառավարության քաղաքականությունը և իրականացում այն՝ կազմակերպելով ՀՀ

դիվանագիտական ծառայությունը արտերկրում, մատուցելով հյուպատոսական ծառայություններ:

ՀՀ արտաքին քաղաքականության նպատակներն են ՀՀ ինքնիշխանության պաշտպանությունը, Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովումը, ՀՀ միջազգային հեղինակության բարձրացումը, ՀՀ կայուն զարգացմանն ուղղված միջազգային և տարածաշրջանային համագործակցության ապահովումը:

Ծրագրի շրջանակում արտաքին գործերի նախարարությունը մատուցում է նաև հյուպատոսական ծառայություններ ՀՀ քաղաքացիներին:

11001 – Կառավարության արտաքին քաղաքականության մշակում և իրագործման ապահովում

2020 թվականին գործարկվելու է նոր «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգը, որի համար կպահանջվի լրացուցիչ 14,832.0 հազ.դրամ:

«Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգի սպասարկման վճար

ՀՀ ԱԳՆ համակարգում 2019թ. գործարկվելու է նոր «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգը, որն իր մեջ ներառելու է նոր բաղադրիչներ, մասնավորապես՝ օտարերկրյա պետություններ մեկնող ՀՀ քաղաքացիների հյուպատոսական հաշվառման համակարգը, առցանց եղանակով դատվածության մասին տեղեկանք ստանալու համակարգը, ընտանեկան կարգավիճակի և անձի ՀՀ քաղաքացիության մասին տեղեկանքների ստացման ենթահամակարգերը, ինչպես նաև անձնագրային գործերի առաքման էլեկտրոնային ենթահամակարգը, անձնագրի վավերականության ժամկետի երկարաձգման, ՀՀ վերադարձի վկայականների տրամադրման, էլեկտրոնային գրանցամատյանների հաշվառման և հաշվետվությունների ստացման ենթահամակարգերը:

Նոր համակարգի շահառուներեն են աշխարհի 40 երկրներում գործող թվով 50 ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինները և հազարավոր քաղաքացիներ, ովքեր կդիմեն և էլեկտրոնային եղանակով որևէ հյուպատոսական ծառայություն կստանան:

Նոր «Էլեկտրոնային հյուպատոսություն» համակարգը 2019թ. սպասարկվելու է անվճար՝ համակարգը մշակած «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ կողմից, սակայն սկսած 2020թ.-ից համակարգի սպասարկումն իրականացվելու է վճարովի:

Համաձայն «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ-ից պաշտոնապես ստացված գնային առաջարկի սպասարկման տարեկան գումարը կազմելու է 14,832,000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Մատուցվելիք սպասարկման ծառայությունը ներառելու է մեկ թեժ գծի օպերատորի, երկու ծրագրավորողի և մեկ համակարգի կառավարչի աշխատանքները, որոնք պատասխանատու են լինելու համակարգի ամենօրյա սպասարկման և անհրաժեշտ փոփոխությունների կատարման համար:

Իր գնային առաջարկում «ՎԻ ԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊԸ նշել է, որ համանման բարդության համակարգերի սպասարկման պայմանագրեր ունեն ՀՀ արդարադատության նախարարության հետ՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և ՔԿԱԳ գործակալության համակարգերի մասով և ՀՀ Ոստիկանության ՃՈ հետ՝ տեղեկատվական համակարգի մասով արդեն երեք տարի: Գնային առաջարկը կազմում է 14,832.0 հազ. դրամ: Կից ներկայացնում ենք «ՎԻ ԻՔՍ Սոֆթ» ընկերության գործադիր տնօրենի կողմից հաստատված սակագների ցանկը:

11002 – ՀՀ մուտքի վիզաների՝ վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության աշխատանքների իրականացում

2018 թվականին այս միջոցառման շրջանակներում հատկացվել է 7,910.0 հազ.դրամ, Միջազգային պայմանագրերի տպագրություն նպատակով: 2019 թվականին այս միջոցառման շրջանակներում հատկացված գումարները՝ 32,335.1 հազ. դրամ, նախատեսված են մուտքի վիզաների, վերադարձի վկայականների և պաշտպանված ձևաթղթերի տպագրության նպատակով: 2020 թվական համար առաջարկում ենք տրամադրել 52,750.0 հազ. դրամ, վերոնշյալ խիստ հաշվառման փաստաթղթերի տպագրության նպատակով: Ներկայացնում ենք տպագրական ծառայությունների հիմնավորումը:

ՀՀ մուտքի վիզա

ՀՀ մուտքի վիզաները տրամադրվում են երկու եղանակով. պիտակի տեսքով՝ ՀՀ սահմանակետերում և ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում և էլեկտրոնային՝ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից:

2018թ. ընթացքում տրամադրված ՀՀ մուտքի վիզաների ընդհանուր թվաքանակը կազմել է 138,920, որը 2017թ. նկատմամբ աճել է 32%-ով:

2018թ. ընթացքում պիտակների տեսքով տրամադրված վիզաների թվաքանակը կազմել է 106,305 հատ, որը 2017թ. նկատմամբ աճել է ընդամենը 13%-ով:

2018թ. ընթացքում տրամադրված վիզաների 64%-ը տրամադրվել է ՀՀ սահմանակետերում, 13%-ը՝ ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում և 23%՝ էլեկտրոնային եղանակով:

Եթե պայմանականորեն ընդունենք, որ 2019թ. ընթացքում պիտակով տրամադրվող մուտքի վիզաների աճի տեմպը կպահպանվի նախորդ տարվա տեմպերով, այսինքն 13%, ապա կարող ենք կանխատեսել, որ այն կկազմի շուրջ 120,000 հատ:

Ըստ հայտի առաջարկվում է 2020թ. համար տպագրել 150,000 հատ վիզա՝ ապահովելով կանխատեսվող պահանջարկը և պահուստային պաշար՝ 25%-ի չափով: Պահուստային պաշարի ապահովումն անհրաժեշտ է տարվա ընթացքում կանխատեսվածից ավելի շատ վիզաներ տրամադրելու դեպքի համար, քանի որ

զբոսաշրջության աճը անխուսափելիորեն կհանգեցնի տրամադրվող վիզաների քանակի աճ, ինչին իրավասու մարմինները պետք է պատրաստ լինեն:

2021-2022թթ. համար կանխատեսում կատարելիս պայմանականորեն ընդունվել է, որ պահանջարկը կպահպանվի նույնությամբ՝ նկատի ունենալով, որ հետագայում հնարավոր կլինի համապատասխան ճշգրտումներ կատարել՝ ելնելով վիզաների տրամադրման դինամիկայից:

2019թ. մայիսի 30-ի դրությամբ ՀՀ ԱԳՆ պահեստում առկա է 33,000 հատ վիզա:

Պահանջվող վիզաների նախահաշվային գինը կկազմի՝

$$150,000 \times 265 = 39,750,000 \text{ ՀՀ դրամ}$$

ՀՀ վերադարձի վկայական

ՀՀ վերադարձի վկայականի սպառումը համեմատաբար կայուն ցուցանիշ է և կազմում է տարեկան շուրջ 25,000-30,000 հատ:

2019թ. մայիսի 30-ի դրությամբ ՀՀ ԱԳՆ պահեստում առկա է 46,500 հատ վերադարձի վկայական: Հետևաբար, կարող ենք կանխատեսել, որ 2020թ. սկզբին տպագրելով լրացուցիչ 40,000 հատ՝ առկա և տպագրվելիք քանակը միասին կբավարարի 2019-2021թթ. պահանջարկը:

Պահանջվող վերադարձի վկայականների նախահաշվային գինը կկազմի՝

$$40,000 \times 65 = 2,600,000 \text{ ՀՀ դրամ}$$

Պաշտպանված ձևաթուղթ

Պաշտպանված ձևաթղթերի սպառումը նույնպես համեմատաբար կայուն ցուցանիշ է և կազմում է տարեկան շուրջ 25,000-30,000 հատ:

2019թ. մայիսի 30-ի դրությամբ ՀՀ ԱԳՆ պահեստում առկա բոլոր տեսակի ձևաթղթերի մնացորդն իրար հետ միասին կազմում է 28,640 հատ: Հետևաբար, կարող ենք կանխատեսել, որ 2020թ. սկզբին տպագրելով լրացուցիչ 52,000 հատ՝ առկա և տպագրվելիք քանակը միասին կբավարարի 2019-2021թթ. պահանջարկը:

Պահանջվող պաշտպանված ձևաթղթերի նախահաշվային գինը կկազմի՝

$$52,000 \times 200 = 10,400,000 \text{ ՀՀ դրամ}$$

Հաշվարկների համար հիմք է հանդիսացել 2019թ. մրցույթի արդյունքում կնքված պայմանագրերով սահմանված մեկ միավորի գինը:

ԾՐԱԳԻՐ 1118 - Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Ծրագրի շրջանակում ԱԳՆ ապահովում է ՀՀ մասնակցությունը բազմակողմ միջազգային համագործակցության ձևաչափերում: ՀՀ անդամակցությունը միջազգային կառույցներին ենթադրում է անդամակցության հետ կապված ֆինանսական պարտավորությունների պարշաճ իրականացում:

Ծրագրի նպատակը միջազգային համագործակցության բազմակողմ ձևաչափերում ՀՀ ակտիվ ներգրավվածության միջոցով ՀՀ արտաքին քաղաքականության գերակայությունների իրականացումն է:

12001 - Միջազգային կազմակերպություններին ՀՀ անդամակցության վճարներ

2019 թվականի ՄԱԿ կանոնավոր բյուջեի անդամ երկրների սանդղակների համաձայն Հայաստանի Հանրապետության անդամավճարը 0,006%-ից դարձել է 0,007%: 2019թ. կանոնավոր բյուջեին ՀՀ անդամավճարը դոլարային հաշվարկով ավելացել է՝ 145,843 դաոնալով 195,176 ԱՄՆ դոլար /33.8 % ավելացում/: ՄԱԿ-ի սանդղակի ՀՀ անդամավճարի փոփոխության արդյունքում ավելացումներ են կանխատեսվում ՄԱԿ-ի համակարգի բոլոր մյուս մարմիններում և մասնագիտացված կառույցներում ՀՀ անդամակցության վճարներով: Ըստ այդ կանխատեսման, ՄԱԿ-ի համակարգի տարբեր բյուջեներին ՀՀ անդամակցության վճարների համար ՀՀ պետբյուջեով նախատեսված գումարները կավելանան 15% չափով: Մյուս կազմակերպություններում, որոնք ուղղակիորեն փոխկապակցված չեն ՄԱԿ-ի հաշվարկներից, այնուամենայնիվ, նկատվում է բյուջեների աճի միտում՝ պայմանավորված ընդհանուր թանկացումներով և ինդեքսացիաների իրականացմամբ՝ 5%-7% շրջանակներում: Այս պահին փոփոխության չափը հստակ կանխատեսելը դժվար է, քանի որ միջազգային կառույցներում բյուջետային ծրագրավորումը, հիմնականում, տեղի է ունենում աշնանը: Տվյալ պահի դրությամբ հայտնի փոփոխությունները հետևյալն են.

1. Կդադարեցվեն նաև Տնտեսական և սոցիալական խորհուրդների և համանման ինստիտուտների միջազգային ասոցիացիային (2500 եվրո) և Ֆրանկոֆոնիայի անդամ-երկրների տնտեսական և սոցիալական խորհուրդների միությանը (1500 եվրո) արվող վճարումները, քանի որ այդ գումարների փոխանցման վերաբերյալ այդ կառույցներից երբևէ փոխանցման հայտեր չեն ստացվել:
2. Ըստ նախնական տեղեկատվության՝ 2020թ.-ին ՄԾՏՀ նախագծերի զարգացման հիմնադրամին վճարվող 10000 ԱՄՆ դոլարը չի վճարվելու, իսկ ՄԾՏՀ-ում ՀՀ անդամավճարը ավելանալու է 5000 ԱՄՆ դոլարի չափով:
3. ՖՄԿ-ում Հայաստանի նախագահության շրջանակներում նախատեսվում է 2 ծրագրերի իրականացում ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպայի խորհրդի հետ, որոնցից յուրաքանչյուրը ենթադրում է 7000-ական եվրոյի չափ կամավոր ներդրում (ընդհանուր՝ 14 000 եվրո):

Նշենք, որ 2018 թվականին Հայաստանը անդամակցել է Եվրոպայի խորհրդի Թմրանյութերի չարաշահման և դրանց ապօրինի շրջանառության դեմ պայքարի համագործակցության խմբին (Պոմպիդու խումբ), որին անդամավճարը կազմում է տարեկան 3472 եվրո:

2018 թվականի բյուջեով հատկացված գումարը կազմել է 2,340,270.14 հազ. դրամ, 2019 թվականին՝ 2,539,988.70 հազ. դրամ: Ելնելով վերոնշյալ վերլուծությունից, 2020թ. առաջարկում ենք հատկացնել 2,489,100.0 հազ. դրամ:

12002-ՆԱՏՕ-ի հասարակական տեղեկատվական կենտրոնի գործունեության ապահովում

Հայաստանում ՆԱՏՕ-ի Տեղեկատվական կենտրոնը հիմնվել է Տրանսատլանտյան Նախաձեռնությունների հայկական կենտրոնի տեղեկատվական հասարակական կազմակերպության կողմից: Հայաստանում ՆԱՏՕ-ի Տեղեկատվական կենտրոնը հիմնելու մասին դրույթն ամրագրված է ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի Անհատական գործընկերության գործողությունների ծրագրում /ԱԳԳԾ/: Հայաստանում ՆԱՏՕ-ի տեղեկատվական կենտրոնն իր գործունեությունը սկսել է 2006 թվականից: Կենտրոնի հիմնական նպատակներն են Հյուսիսատլանտյան դաշինքի գործունեության մասին տեղեկատվության տարածումը եւ ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի համագործակցության ներկայացումը: Կենտրոնի տարածքի վարձակալության ծախսերը՝ տարեկան 9600.0 հազ. դրամի չափով հոգում է ՀՀ կառավարությունը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: Իր հերթին ՆԱՏՕ-ն Կենտրոնին է տրամադրում տարեկան ֆինանսական հատկացումներ, ապահովում է գրականությամբ եւ այլ նյութերով:

ԾՐԱԳԻՐ 1128 – Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում

Ծրագրի շրջանակում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը դիվանագիտական ծառայության մարմինների միջոցով (դեսպանություններ, գլխավոր հյուպատոսություններ, միջազգային կազմակերպություններում մշտական ներկայացուցչություններ) միջոցով ապահովում է երկկողմ և բազմակողմ արտաքին կապերի պահպանումը, մատուցում է հյուպատոսական ծառայություններ:

11001 – Օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում հավատարմագրված ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության իրականացում

ՀՀ դեսպանությունների պահպանման ծախսերի համար 2019 թվականի բյուջեով հատկացվել է 10,609,513.0 հազ. դրամ, որից 10,261,990.6 հազ. դրամը հաստատվել է 2019 թվականի բյուջեով և 2019 թվականին կառավարության պահուստային ֆոնդից դեսպանությունների պահպանման ծախսերի համար լրացուցիչ հատկացվել է ևս 347,522.4 հազ. դրամ:

ՄԺԾԾ չափաքանակը սահմանված է 2020 թվականի համար 10,855,720.0 հազ. դրամ ներկայացվում է նոր բացվող երկրներում՝ Եթովպիայում, Իսրայելի պետությունում և Ուզբեկստանում ՀՀ դեսպանությունների պահպանման ծախսերի համար անհրաժեշտ լրացուցիչ հայտը՝ **415,607.7** հազ. դրամի չափով, որից՝

- **185,721.8** հազ. դրամ – Եթովպիայում ՀՀ դեսպանության պահպանման ծախս
- **221,808.7** հազ. դրամ – Իսրայելում ՀՀ դեսպանության պահպանման ծախս
- **8,077.2** հազ. դրամ – Ուզբեկստանում ՀՀ դեսպանության պահպանման ծախս (նստավայրը՝ Երևան)

Օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանությունների և հյուպատոսական հիմնարկներին 2020 թվականի պահպանման ծախսերի լրամշակված հայտը կկազմի **11,271,327.7 հազ.դրամ**:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵԹՈՎԴԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Աֆրիկյան գտնվում է խորքային աշխարհաքաղաքական, դեմոգրաֆիական, տնտեսական և տեխնոլոգիական տրանսֆորմացիաների շրջանում, որոնք ուրվագծում են մայրցամաքի նոր, ավելի կարևոր դերը համաշխարհային գործընթացներում: Միաժամանակ Աֆրիկյան մնում է համաշխարհային նյութառեսուրսային հիմնական աղբյուրներից, առանց որի հնարավոր չէ ապահովել չորրորդ արդյունաբերական հեղափոխության ընթացքը:

Աֆրիկյան՝ մասնավորապես անդրսահարյան աֆրիկյան երկրների հետ դինամիկ հարաբերություններ ունենալը ՀՀ-ի համար ակտուալ անհրաժեշտություն է: ՀՀ-ն դեռևս բավական հեռու է Աֆրիկայի հետ շփումների համապատասխան մակարդակ ունենալուց: Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության 17-րդ գագաթնաժողովի անցկացումը Երևանում 2018թ. հոկտեմբերին, ինչպես նաև 2019թ. ապրիլին ՀՀ ԱԳ նախարարի այցը Եթովպիա և Ռուանդա նպաստեցին ՀՀ ճանաչելիության բարձրացմանն Աֆրիկայում, սակայն այդ կապակցությամբ անելիքները դեռ նոր են սկսվում:

ՀՀ հակառակորդ երկրներն Աֆրիկայում վարում են ծավալապաշտական քաղաքականություն: Ադրբեջանն աֆրիկյան աշխարհամասում ունի 5 դեսպանություն Եգիպտոսում, Եթովպիայում, Ալժիրում, Մարոկկոյում, Հարավաֆրիկյան Հանրապետությունում, որոնք համատեղության կարգով հավատարմագրված են աֆրիկյան 14 այլ երկրներում և ակտիվ գործունեություն են իրականացնում տարածաշրջանում:

Աֆրիկայի հետ շփումները խիստ կարևոր են ՀՀ-ի համար նաև տնտեսական առումով: Հայաստան կարելի է ներմուծել հումք՝ սննդավերամշակող գյուղատնտեսության համար, սուրճ (Եթովպիա, Ուգանդա, Կոտ դ'Իվուար), կակաո (Կոտ դ'Իվուար, Գանա, Նիգերիա, Կամերուն), թուրքին (Զիմբաբվե, Զամբիա, Տանզանիա, Մոզամբիկ, Մալավի), ավաաստ (Անգոլա, Բոտսվանա, Կոնգոյի ԺՀ, ՀԱՀ, Նամիբիա) և այլն:

Ելնելով տարածաշրջանի բազմազանությունից և առանձնահատկություններից, ինչպես նաև ՀՀ ռեսուրսային սահմանափակությունից՝ նպատակահարմար է անդրսահարյան Աֆրիկա ՀՀ մուտքի լավագույն տարբերակ դիտարկել Եթովպիայի Դաշնային Ժողովրդավարական Հանրապետությունը:

Եթովպիան ներկայումս արագ տեմպերով աճող պետություն է, որը գրանցում է նաև շարունակական քաղաքական և վարկանշային աճ միջազգային հարաբերություններում: Ադիս Աբեբան աֆրիկյան մայրցամաքի քաղաքական հիմնական կենտրոններից մեկն է: Այստեղ է տեղակայված Աֆրիկյան Միության կենտրոնակայանը, իսկ Աֆրիկյան Միությանն ադամակցում են աֆրիկյան մայրցամաքի բոլոր երկրներն առանց բացառության:

2. Կարգավորման նպատակը

ՀՀ-ն դիվանագիտական ներկայացվածություն չունի անդրսահարյան Աֆրիկայում, իսկ վերջիններիս ներկայացվածությունը Հայաստանում սահմանափակվում է միայն մի քանի երկրի կողմից ՀՀ-ում ոչ ռեզիդենտ դեսպանների հավատարմագրմամբ: Ադիս Աբեբայում ՀՀ

դիվանագիտական ներկայացուցչություն հիմնումը զգալիորեն կկարգավորի և կակտիվացնի ՀՀ շփումներն անդրսահարյան աֆրիկյան երկրների հետ թե՛ հնարավոր տնտեսական հեռանկարների, թե՛ տարբեր միջազգային հարթակներում մայրցամաքի 50-ից ավելի երկրների և դրանց խմբավորումների աջակցությունը ստանալու տեսանկյունից:

3. Ակնկալվող արդյունք

Ադիս Աբեբայում դիվանագիտական ներկայացուցչության հիմնումը ՀՀ-ին հնարավորություն կընձեռի ոչ միայն սերտ երկկողմ հարաբերություններ հաստատել դինամիկ զարգացող Եթովպիայի հետ, այլև խորացնել շփումներն ու համագործակցությունն աֆրիկյան բոլոր երկրների հետ: Ադիս Աբեբան կարող է դառնալ այն հարթակը, որի միջոցով ՀՀ-ն իր ներկայությունը և մասնակցությունը կարող է ունենալ Աֆրիկայի մի շարք խիստ կարևոր հատվածներում, մասնավորապես՝ Մեծ լճերի շրջանում, Կոնգոյի ավազանում և Աֆրիկայի Ատլանտյան ափում: Ավելին, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության հիմնումը Եթովպիայում հնարավորություն կտա զարգացնել բազմաբովանդակ միաժամանակյա համագործակցությունը ինչպես Եթովպիայի ու ընդհանուր աֆրիկյան երկրների, այնպես էլ Աֆրիկյան Միության հետ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԻՍՐԱՅԵԼԻՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Վերջին տարիներին նկատելի առաջընթաց է ապրել հայ-իսրայելական երկկողմ փոխգործակցության զարգացման դինամիկան: Տարբեր մակարդակներում շփումների ակտիվացումը, սակայն, դեռևս չի հանգեցրել ցանկալի արդյունքների:

Հայ-իսրայելական հարաբերությունների զարգացման դրական դինամիկան պահպանելու առումով, կարևոր քայլ կլինի սեղմ ժամկետներում / 2020թ. սկիզբ/ ՀՀ դեսպանության բացումը Թել Ավիվում:

2. Կարգավորման նպատակը

Իսրայելում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություն հիմնելու անհրաժեշտությունը պայմանավորված է նաև հետևյալ նկատառումներով.

- Իսրայելն ամենակարևոր քաղաքական դերակատարներից է մերձավորարևելյան տարածաշրջանում, որի վարած քաղաքականությունն ուղղակիորեն ազդում է այդ տարածաշրջանի ներկա և ապագա վերաճնալիզմի և կայունության վրա: Իսրայելում ՀՀ դեսպանության բացումն ու երկկողմ հարաբերություններին նոր զարկ տալը կնպաստի տարածաշրջանում Հայաստանի շահերի ավելի արդյունավետ պաշտպանելուն:
- Բազմադարյա հայկական ներկայությունը, հարուստ պատմա-մշակութային ժառանգությունը, բազմաթիվ կալվածքների առկայությունը և Հայ առաքելական եկեղեցու՝ Սուրբ վայրերի իրավատեր լինելու հանգամանքը, պարտավորեցնում են պետական մակարդակով ներգրավվել դրանց պահպանմանը:
- Իսրայելում ՀՀ դեսպանության հիմնադրումը նոր հնարավորություններ կստեղծի փոխշահավետ համագործակցության զարգացման համար՝ տեղեկատվական

տեխնոլոգիաների, կիրքեր անվտանգության, զբոսաշրջության, առողջապահության, գիտության և կրթության, գյուղատնտեսության և մի շարք այլ ոլորտներում, որոնցում Իսրայելի ունեցած փորձը համաշխարհային մակարդակով լավագույններից է:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ ՈՒՋՐԵԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ, ՆՍԱՎԱՅՐԸ՝ ԵՐԵՎԱՆ

ՀՀ Նախագահի 2019թ. հունիսի 20-ի ՆՀ-132-Ա հրամանագրով Ուզբեկստանի Հանրապետությունում ՀՀ դեսպան է նշանակվել նստավայրը Երևան: Կից ներկայացված է Ուզբեկստանում ՀՀ դեսպանի աշխատավարձի, վարչատնտեսական 1 աշխատակցի աշխատավարձի և պահպանման այլ ծախսերի 2020 թվականի հաշվարկը, որը կազմում է 16.6 հազ. ամ. դոլարին համարժեք 8,077.2 հազ.դրամ /Հաշվարկը կցվում է/:

Ուզբեկստանը ցայսօր դիվանագիտական առումով ներկայացված չէ Հայաստանում և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության բացումը կխթանի նաև Ուզբեկստանի պատասխան քայլը այդ ուղղությամբ, ինչը հույժ կարևոր կլինի թյուրքալեզու մահմեդական երկրների հետ մեր և մեր արևելյան հարևանների առնչակցությունների հավասարակշռման առումով, ըստ որում ցանկալի է, որ թե Երևանում, թե Տաշքենդում ներկայացված լինեն ռեզիդենտ դեսպաններ:

Տաշքենդում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության հիմնումը հնարավորություն կընձեռնի նախ և առաջ սերտ երկկողմ փոխշահավետ հարաբերություններ հաստատել դինամիկ զարգացող Ուզբեկստանի հետ, ինչպես նաև մեծ օգնություն կլինի Ուզբեկստանի տարբեր քաղաքներում հանգրվանած ՀՀ հազարավոր քաղաքացիներին հյուպատոսական ծառայություններ տրամադրելու, ուզբեկահայ բավական սովոր համայնքի հոգևոր ուժեղացման առումներով: Դեսպանի տաշքենդյան հանդիպումները ցույց են տվել, որ Ուզբեկստանը նույնպես շահագրգռված է Հայաստանի հետ համակողմանի հարաբերություններ զարգացնելու հարցում և այս հանգամանքը ևս մեծապես կարևորում է մեր երկրի դիվանագիտական ներկայությունը Ուզբեկստանի Հանրապետությունում:

2018 թվականի բյուջեով հատկացված գումարը կազմել է 10,143,918.96 հազ. դրամ, 2019 թվականին՝ 10,609,513.0 հազ. դրամ:

2020թ. ՄԺԾԾ սահմանաչափը ներկայացված է 10,855,720.0 հազ.դրամ, առաջարկում ենք 2020 թ. հայտը սահմանել 11,271,327.7 հազ. դրամի չափ՝ ներառելով երկու նոր բացվող դեսպանությունների պահպանման ծախսերը:

12001- ՆԱՏՕ-ում ՀՀ առաքելության գրասենյակի գործունեության ապահովում

ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի կառուցման հետ կապված ծախսերը հիմնական մասը ՆԱՏՕ-ն իրականացնում է պայմանով, որ դրանք վարձակալների կողմից սկսեն մարվել 2017-ից սկսած: Մասնաշենքում ու հարակից տարածքում իրականացվելիք աշխատանքների ընդհանուր արժեքը կազմելու է 4.118.557 եվրո: Այդ գումարը պիտի վճարեն գործընկերներ-երկրները՝ ըստ իրենց զբաղեցնելիք տարածքների: Ըստ այդմ, Հայաստանի մասնաբաժինը կազմելու է 154.970 եվրո, որի 16.628-ը՝ ներքին հարդարման լրացուցիչ աշխատանքների համար է եւ ենթակա է

վճարման 2016թ. ընթացքում՝ 2016 թ. բյուջեով ՀՀ արտաքին գործերի նախարարությանը „ՆԱՏՕ-ի նոր կենտրոնակայանի շենքի վերանորոգման աշխատանքների փոխհատուցման մասնաբաժին, ծրագրով հատկացվել է 16,628 եվրոյին համարժեք 8,660.4 հազ. դրամ: 2017 թվականից սկսել է վերանորոգման և վերազինման գումարի մարումը, ընտրվել է 7 տարի մարման տարբերակը: Մարվում է 7 տարվա ընթացքում 21375 եվրո՝ ներառված հավելավճարները: ՄԺԾԾ-ի նախագծի հիմքում դրվող ՀՀ պետական բյուջեից կատարվելիք ծախսերի ֆինանսավորման 2019-2021 թթ. կողմնորոշիչ չափաքանակներում ներկայացված է տարեկան 21375 եվրոյին համարժեք դրամ: 2019 թ. բյուջեով հատկացվել է 11834.3 հազ.դրամ (1 եվրոն 553.65 դրամ կուրսին համապատասխան): Ներկայացվում է 2020 թվականի չափաքանակը՝ 11,682.0 հազ.դրամի չափով, ըստ ՄԺԾԾ առաջարկվող սահմանաչափի (ճշտված տարադրամի կուրսով):

31001 - Արտերկրում ՀՀ դեսպանությունների համար շենքերի գնում

2005 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարի համապատասխան լիազորագրով Բելգիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպանին իրավունք է տրվել ձեռք բերել Բրյուսել քաղաքում Մոնտուայե 28 հասցեում գտնվող շենքը որպես ՀՀ դեսպանության նստավայր, ինչպես նաև լիազորվել է 2005 թ. KBC բանկից վարկ վերցնել 550000 եվրո, համապատասխան տոկոսներով, 15 տարի ժամկետով՝ ըստ պայմանագրի: Սկսած 2005 թվականից յուրաքանչյուր տարի բյուջեով այդ նպատակով հատկացվում է 64896 եվրոյին համարժեք դրամ և մարվում է բանկից վերցրած վարկի տվյալ տարվա չափաբաժինը՝ ամսեկան 5408 եվրոյով: Գումարը հաշվարկվում է տվյալ տարվա եվրո-դրամ հաստատված կուրսով: 2019 թվականի բյուջեով այս ծրագրով հատկացվել է 64.9 հազ. եվրոյին համարժեք 35 929.7 հազ.դրամ: 2020 թվականի վարկի մարման նպատակով բյուջեով պահանջվող չափաքանակը կկազմի 27039 եվրոյին համարժեք 14,779.0 հազ.դրամ (հաշվարկը կատարվել է ճշտված տարադրամի կուրսով): Տեղեկացնում ենք, որ վարկի մարումն ավարտվում է 2020 թվականի մայիս ամսին, կցվում է KBC Bressels բանկի կողմից ներկայացված վարկի մարման ժամանակացույցը: 2020 թվականի հունվար-մայիս ամիսների համար վարկի վճարման վերջնական գումարը կազմում է 27039 եվրո (5407.79x5 ամիս ներառյալ տոկոսավճարները):

ԾՐԱԳԻՐ 1178 – ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում

ԱԳՆ արարողակարգի պետական ծառայությունը ծրագրի շրջանակում միջազգային արարողակարգային չափանիշներին համապատասխան միջոցառումներ է կազմակերպում և իրականացում ՀՀ-ում և արտերկրում:

ՀՀ պետական արարողակարգի ծառայության ընդհանուր նպատակների և գերակայությունների իրականացման համար կապահանջվի. 2020 թվականի համար՝ 185,831.0. դրամ, 2021 թվականի համար 188,619.0 հազ. դրամ և 2022 թվականի համար 191,448.0 հազ. դրամ բյուջետային հատկացումներ:

11001 – Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում արարողակարգային միջոցառումների իրականացում

2020 թվականի համար պահպանմա ծախսերը կազմում են 185,831.0. դրամ , 2021 թվականի համար՝ 188,619.0 հազ. դրամ և 2022 թվականի համար՝ 191,448.0 հազ. դրամ:

ԾՐԱԳԻՐ 1050 – Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում

11001 - ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը մասնագետներ է պատրաստում միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում, վերապատրաստում է պետական, այդ թվում՝ դիվանագիտական ծառայողների:

Մինչև 2018թ. ներառյալ Եվրոպական Միությունը ֆինանսավորել է Դիվանագիտական դպրոցի՝ արտերկրից հրավիրվող դասախոսների, ինչպես նաև այլ ծախսեր, ընդհանուր առմամբ այդ ընթացքում ծախսելով շուրջ երկու միլիոն եվրո:

2018թ. դադարած ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծախսերի մի մասը ստանձնել է ՀՀ կառավարությունը՝ 2019թ. և հետագա տարիների ԴԴ բյուջեն ավելացնելով 25,000 եվրոյին համարժեք դրամով: Հատկացված գումարով Դպրոցը հոգում է միայն մեկ՝ Վերապատրաստման ծրագրում ներգրաված, արտերկրից հրավիրվող 5 դասախոսների ծախսերը: Տարեկան նախկին մեկ անգամի փոխարեն, 2019թ-ից այդ ծրագիրը կիրականացվի տարեկան երկու անգամ:

Դիվանագիտական դպրոցի՝ ՀՀ պետական բյուջեից առաջին տարվա՝ 2011թ. ֆինանսավորումը 25,000.0 հազ դրամից 2019թ. հասել է 69,660.8 հազ դրամի:

Շարունակում է խնդրահարույց մնալ դիվանագիտական կադրերի պատրաստման «Միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն» տասնմեկամյա ծրագրի ֆինանսավորումը՝ նույն որակի դասավանդման և հմտությունների ձեռքբերման համար տարեկան առնվազն 200,000 եվրոյին համարժեք դրամ: Այս միջոցների բացակայության պատճառով 2018-19թթ. ծրագիրը չի իրականացել, 2019-20թթ. ծրագրի իրականացումն էլ հավանական չէ:

«ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից իրականացվող «Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում» միջոցառման գործունեության մասով լրացուցիչ պարզաբանում:

Ի պատասխան ՀՀ արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանին ՀՀ ֆինանսների նախարար Ատոմ Զանջուղազյանի (մտից փաստաթուղթ՝ 23133-19, ՀՀ արտաքին գործերի նախարարության ՀՀ 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտի վերաբերյալ) 12.06.2019 գրության

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը անդրադարձել է «ՀՀ արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող

«Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում» միջոցառման և ՊՈԱԿ-ի այլ գործառույթները ՀՀ համապատասխան ԲՈԻՀ (երի) միջոցով իրականացնելու հնարավորության (ՊՈԱԿ-ը տվյալ ԲՈԻՀ-ի կառուցվածքում ինտեգրելով) և ՊՈԱԿ-ը լուծարելու ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկությանը 2019թ. բյուջետային հայտերի ներկայացման՝ ՀՀ վարչապետի վարած խորհրդակցության, ապա ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի վարած խորհրդակցության, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարությունում փոխնախարար Արևիկ Անափիոսյանի վարած հանդիպում-քննարկման (18 փետրվարի, 2019թ.) ժամանակ:

Ավելին, որպես ՀՀ վարչապետի 07.02.2019թ. թիվ 02/16.8/5096-2019 հանձնարարականի (մտից փաստաթուղթ՝ 4564-19 Բյուջետային հայտերի քննարկման միջանկյալ արդյունքների ամփոփման վերաբերյալ, ելից՝ Գրանցման համար 1114/2210-19, Գրանցման ամսաթիվ 21 Փետրվար 2019 20:05:41) պատասխան ՀՀ ԱԳՆ տեղեկացրել է, որ «ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունն ամբողջովին համապատասխանում է ի հավելումն ՀՀ վարչապետի 04/10/2018 թվականի թիվ 02/23.19/33622-18 հանձնարարականով ներկայացված «ՀՀ պետական, ներառյալ ֆինանսների կառավարման համակարգերում առկա հիմնական խնդիրների և դրանց մասով ձևավորված ընդհանուր առանցքային մոտեցումների վերաբերյալ միջանկյալ ամփոփագրի» կազմված՝ «Պետության հիմնադրած (մասնակցությամբ) հիմնադրամների, ՊՈԱԿ-ների և առևտրային կազմակերպությունների վերաբերյալ թեմատիկ ամփոփագրում» ՊՈԱԿ-ների գործունեությանը ներկայացված պահանջներին, այսինքն՝ մի քանի հիմնավորումների համաձայն Դիվանագիտական դպրոցի **առևտրային այլընտրանքը բացակայում է և Դիվանագիտական դպրոցի առևտրային այլընտրանքի առաջացումը իրատեսական չէ :**

Ռեսուրսների կառավարման տեսակետից, «ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունն ամբողջովին համապատասխանում է «ՀՀ պետական, ներառյալ ֆինանսների կառավարման համակարգերում առկա հիմնական խնդիրների և դրանց մասով ձևավորված ընդհանուր առանցքային մոտեցումների վերաբերյալ միջանկյալ ամփոփագրի» պահանջներին՝ **արդյունավետ է, օգտավետ և տնտեսող,** և Դիվանագիտական դպրոցը նաև **հավելյալ արժեք ստեղծող հաստատություն է:**

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը համարում է, որ նախորդ տասը տարիների ընթացքում Դիվանագիտական դպրոցը կայացել է որպես դիվանագիտական կադրերի որակյալ կրթություն և դիվանագետների և այլ պետական մարմինների աշխատակիցների համար որակյալ վերապատրաստում իրականացնող, արդյունավետ գործող և հեղինակություն վաստակած կառույց, որի իրականացրած և Դիվանագիտական ծառայության մասին օրենքով նախատեսված ծրագրերը արդյունավետության նույնախի բարձր մակարդակով, նույն ծավալով և որակով իրատեսական չէ իրականացնել հայաստանյան այլ հաստատության կողմից: Դիվանագիտական դպրոցի գործառույթները նույնական չեն բուհերի գործառույթների հետ և տարբերվում են մի շարք հարթություններում:

Հետևաբար, ՀՀ ԱԳՆ-ն նպատակահարմար չի գտնում Դիվանագիտական դպրոց ՊՈԱԿ-ի լուծարումը և նրա գործառույթները որևէ ԲՈԻՀ-ի փոխանցելը:

Ավելին, ՀՀ արտաքին գործերի նախարարությունը համարում է, որ անհրաժեշտ է Դիվանագիտական դպրոցի համար ապահովել ՀՀ պետական բյուջեից կանոնավոր ֆինանսավորման զգալիորեն ավելի բարձր մակարդակ և Դպրոցի ինստիտուցիոնալ

կարողությունների հետագա ամրապնդման և հզորացման միջոցով ապահովել դրա հետագա գործունեության շարունակականությունը:

ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցի «1050 Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում» ծրագրի «11001 Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում» միջոցառման, ինչպես նաև Դիվանագիտական դպրոցի այլ ծրագրերի տեղացի դասախոսների վարձատրության մեկ ժամվա արժեքը հաշվարկվում է համաձայն ԱԳՆ դիվանագիտական դպրոց ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի 2013թ. սեպտեմբերի 24-ի նիստով հաստատված՝ դասախոսների վարձատրության դրույքաչափերի սանդղակի (*Հավելված Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության դիվանագիտական դպրոցի կառավարման խորհրդի 2013թ. սեպտեմբերի 24-ի նիստի #3 արձանագրություն*): Վարձատրության գնագոյացման հիմք են դասախոսի գիտական աստիճանը, կոչումը և աշխատանքային փորձառությունը: Ըստ այս դասակարգումների՝ մեկ ժամի արժեքը տատանվում է 9,500 դրամից մինչև 15,000 դրամ՝ ներառյալ հարկերը և կազմել է միջինը 13.888.9 դրամ, ընդհանուր 180 ժամի համար՝ 2.500.000 դրամ: ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նույն որոշմամբ արտերկրից հրավիրված դասախոսների վարձատրությունը կատարվում է դասախոսի և ԴԴ տնօրենի միջև կնքված գրավոր պայմանագրի համաձայն, այլ ծախսերի փոխհատուցման հաշվառումով:

Արտերկրից հրավիրված դասախոսների հետ պայմանագրերի համար հիմք են ծառայել 2010-2018թթ. նրանց վարձավճարները: Դասախոսներին վճարվում է փաթեթային փոխհատուցում՝ ըստ դասավանդվող օրերի և ներառում է նաև Հայաստանում նրանց կեցության ծախսերը և ավիատոմսերի արժեքը, ինչը տարբերվում է ըստ երկրների և տոմսերը գնելու ժամանակաշրջանի: Դասավանդվող մեկ ժամի միջին արժեքն է 140.224 դրամ՝ ներառյալ հարկերը, ինչը 160 ժամի համար կազմում է ընդամենը 22.435.840 դրամ: Հրավիրված դասախոսների գործուղման նախորդ ժամանակահատվածի ծախսերը կազմել են 5,664.160 դրամ:

2019թ. առաջին կիսամյակում տեղացի և արտերկրի դասախոսների հետ կնքված պայմանագրերի նմուշների պատճենները կցվում են:

Դիվանագիտական դպրոցի աշխատակիցների աշխատավարձը համաձայն հաստատված հաստիքացուցակի կազմում է 25.794.012 դրամ, իսկ պահպանման ծախսերը՝ 13.266.840 դրամ, ինչը ներառում է նաև աշխատակիցների գործուղումների, մասնագիտական գրականության ձեռքբերման, ուսումնական այցերի, պարբերականների բաժանորդագրության և այլ ծախսեր:

4.3. Նոր նախաձեռնություններ

ԾՐԱԳԻՐ 1178 – ՀՀ-ում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում

31001 – Արարողակարգի ծառայության տեխնիկական հագեցվածության բարելավում

«Տրանսպորտային սարքավորումների ձեռք բերման ծախսեր»

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայության ենթակայության տակ գտնվող, 2007 թվականին ձեռքբերված <<TOYOTA COROLLA 1.6 GAS>> մակնիշի ծառայողական ավտոմեքենայի հետագա շահագործումը տնտեսապես նպատակահարմար չէ: Մեքենան հնամաշ է, շահագործման ընթացքում բազմիցս խափանվել է, անհարմարություն պատճառելով մեքենայում գտնվող օտարերկրյա հյուրերին: Ծառայության գործառույթներից ելնելով, օտարերկրյա պետությունների պատվիրակությունների Հայաստանի Հանրապետություն այցերը նախապատրաստելու շրջանակներում հաճախ առաջանում է ՀՀ մարզեր մեկնելու անհրաժեշտություն, սակայն վերոնշյալ ավտոմեքենան տեխնիկական թերությունների պատճառով չի օգտագործվում այդ նպատակով: Ծառայության գործառույթները պատշաճ մակարդակով կատարելու նպատակով դիմել ենք Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ հնարավորության դեպքում վերոնշյալ ավտոմեքենան համապատասխան ավտոմեքենայով փոխարինելու վերաբերյալ խնդրանքով, սակայն դեռ պատասխան չենք ստացել:

Ուստի խնդրում ենք 2020-2022թթ. ՄԺԾԾ հայտով ներկայացված 15,890.0 հազ. դրամ գումարը նախատեսել 2020 թվականի պետական բյուջեում՝ հնամաշ մեքենան նորով փոխարինելու նպատակով:

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը 2020-2022 թթ. ոչ բյուջետային աղբյուրներից սպասվող եկամուտներ չունի:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից իրականացվող ծրագրերը վերաբերում են Հայաստանի Հանրապետությանը և տարածքային բաշխվածություն չունեն:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը 2020-2022 թթ. արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկեր և դրամաշնորհներ չունի:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2020 թվականին ՀՀ արտաքին գործերի նախարարությանը ուղղվելու է 15,978,523.4 հազ. դրամ, 2021 թվականին՝ 16,052,709.7 հազ.դրամ և 2022 թվականին՝ 16,083,599.7 հազ.դրամ: